

ԿՐԹԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Ե ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄԸ



Սկսվել են մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 25-ը ներառյալ կշարունակվի մասնագիտական կրթական ծրագրերի գրանցումը:

Գրանցումը հնարավոր է իրականացնել ինչպես հեռավար կարգով vet.emis.ge կայքէջով, այնպես էլ՝ Վրաստանի ողջ տարածքով մասնագիտական կրթական ծրագրերով գործող հաստատություններում:

Վրաստանի ողջ տարածքով մասնագիտական կրթական ծրագրերով գործող հանրային եւ մասնավոր հաստատություններն ուսանողներին 2025 թվականին կարող են ընդունել բազմաօգուտ մասնագիտական հանրակրթական ծրագրերով:

2025 թվականին ավելացել է ինտեգրված ծրագրերի թիվը, ինչը բազային կրթություն ունեցող անձանց հնարավորություն է ընձեռում մասնագիտական կրթության հետ նաեւ ստանալ ընդհանուր կրթություն: Վերոնշյալ ծրագրերի ավարտից հետո, տրվում է մասնագիտական դիպլոմ եւ ընդհանուր կրթությունը հաստատող փաստաթուղթ՝ ատեստատ: Ցանկության դեպքում, շրջանավարտին վերապահվում է բարձրագույն կրթության համապատասխան աստիճանով ուսումը շարունակելու հնարավորություն:

Գրանցումն իրականացվում է նաեւ աշխատանքի վրա հիմնված ուսուցման ձեւաչափով իրականացվող ծրագրերով: Վերոնշյալ մոտեցումը նախատեսում է հանրակրթական հաստատության եւ ընկերությունների միջեւ պատասխանատվության բաշխում, երբ ծրագրով նախատեսված ուսուցման արդյունքների որոշակի մասի հաստատումը տեղի է ունենում կոնկրետ ընկերությունում իրատեսական աշխատանքի պայմաններում:

2025 թվականին առաջարկվող մասնագիտական կրթական հաստատությունների եւ ծրագրերի լրիվ ցանկը եւ գրանցման հրահանգները ներկայացված են vet.emis.ge հարթակում:

Մասնագիտական ծրագրերի կապակցությամբ խորհրդատվություններ ստանալու համար կարելի է կապվել (+99532) 2 200 220 հեռախոսահամարի թե՛ գծով կամ էլեկտրոնային info@emis.ge փոստով:

ՎՐԱՍՏԱՆԻ ԳՊՐՈՋՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՒՄ Ե 640 ՀԱՉԱՐԻՅ ԱՎԵԼԻ ԱՃԱԿԵՐՏ

TBC Capital-ին տեղեկատվություն է հրապարակել 2024-2025 ուսումնական տարում Վրաստանի դպրոցներում սովորող աշակերտների թվի մասին:

Ըստ հրապարակած տեղեկատվության, 2024-2025 ուսումնական տարում Վրաստանի դպրոցներում սովորող աշակերտների թիվը հասել է 640 հազար 700-ի, նախորդ ուստարվանից մեկ տոկոսով ավելի: Նրանցից 570 հազար 400 աշակերտ (89 տոկոս) սովորում է պետական դպրոցներում, իսկ 70 հազար 300-ը՝ մասնավոր դպրոցներում:

Վրաստանում դպրոցների ընդհանուր թիվը նվազել է մինչև 2294, ինչը պայմանավորված է մասնավոր դպրոցների թվի նվազմամբ: Այժմ Վրաստանում գործում է 2086 պետական եւ 208

մասնավոր դպրոց: Մայրաքաղաքում կա 109 մասնավոր դպրոց, որտեղ սովորում է 45 հազար 500 աշակերտ: Թբիլիսիի մասնավոր դպրոցներում աշակերտների ընդգրկվածության մակարդակը կազմում է 19,8 տոկոս, որն ամենաբարձրն է երկրում:

Ինչ վերաբերում է ուսումնավարձին, ապա՝ Թբիլիսիի մասնավոր դպրոցների 47 տոկոսում տարեկան ուսման վարձը տատանվում է 6 հազարից մինչև 12 հազար լարիի սահմաններում, իսկ 24 տոկոսում՝ կազմում է 12 հազար: լարիից ավելի:

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ՄԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԿԱ ՕՐԱՑՈՒՅՑԸ

Սեպտեմբերի 2

1961 թվականին Թբիլիսիում ծնվել է Հասմիկ Պապիկյանը, մայրաքաղաքի թիվ 103 դպրոցի հայկական բաժանմունքի ուսնասվար:

Սեպտեմբերի 3

1947 թվականին ծնվել է Երեւանի «Արարատ-73» թիմի ֆուտբոլիստ, Խորհրդային Միության չեմպիոն եւ գավաթակիր Լեւոն Իշտոյանը:

Սեպտեմբերի 4

1947 թվականին Նինոծմինդայի Հեշտիա գյուղում ծնվել է Վրաստանի եւ Հայաստանի գրողների միության անդամ, բանաստեղծ, արձակագիր, մանկագիր, մանկավարժ Վիկտոր Հովսեփյանը (մահացել է 1996թ.):

Սեպտեմբերի 5

1941 թվականին Թբիլիսիում ծնվել է Էդգար Գասպարովը, հրապարակախոս, Վրաստանի վաստակավոր լրագրող (մահացել է 2021թ.):

1963 թվականին Նինոծմինդայի շրջանի Խոջաբեկ գյուղում ծնվել է Լեւոն Վարդանյանը, Նինոծմինդայի քաղաքապետարանի մշակույթի, կրթության, ստորտի, երիտասարդության հարցերի ծառայության պետ:

Սեպտեմբերի 7

1925 թվականին Թբիլիսիում ծնվել է արձակագիր, դրամատուրգ, սցենարիստ, ռեժիսոր, խմբագիր ու գեղանկարիչ, արվեստի վաստակավոր գործիչ Աղասի Այվազյանը (մահացել է Երեւանում, 2007 թվականին):

Սեպտեմբերի 8

1976 թվականին Ախալքալաքիում ծնվել է «Ախալքալաքիի կարտոֆիլ» հասարակական կազմակերպության նախագահ Մախարե Մացուկատովը:

1971 թվականին Ծալկայի շրջանի Դուշի գյուղում ծնվել է Սամվել Խուբլարյանը, ծրագրավորող, հասարակական գործիչ:

Սեպտեմբերի 10

1949 թվականին Թբիլիսիում ծնվել է անվանի բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, «Վրաստան» թերթի լրագրող, «Կամուրջ» տարբերքի հիմնադիր Անահիտ Բոստանջյանը (մահացել է 2017 թվականին):

նին, հուղարկավորված է Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում):

1956 թվականին Նինոծմինդայում ծնվել է Սամվել Արզումանյանը, Նինոծմինդայի քաղաքապետարանի ֆինանսա-բյուջետային ծառայության պետ:

Սեպտեմբերի 12

1953 թվականին Թբիլիսիում ծնվել է մերօրյա շնորհաշատ բեմադրիչ, տաղանդավոր դերասան, գրող, Թբիլիսիի Պ.Աղանյանի անվան պետհայդրամայի թատրոնի տնօրեն Արմեն Բայանդուրյանը:

Սեպտեմբերի 15

1962 թվականին Նինոծմինդայում ծնվել է «Փարվանա» հեռուստաընկերության հիմնադիր, Նինոծմինդայի սակրեբուլոյի պատգամավոր Կոնստանտին Վարդանյանը:

Սեպտեմբերի 16

1882 թվականին ծնվել է գրող, հրապարակախոս, պատմավիպագիր ու բժիշկ Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան, մահացել է 1888 թվականին, հուղարկավորված է Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում):

1983 թվականին Ախալքալաքիում ծնվել է Ախալքալաքիի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը:

Սեպտեմբերի 18

1895 թվականին Ախալքալաքիում ծնվել է Հռոմի կաթոլիկ եկեղեցու գործիչ, կուրիալ կարդինալ, Հայ Կաթոլիկ եկեղեցու Կաթոլիկոս-Պատրիարք Գրիգոր-Պետրոս Աղաջանյանը (մահացել է Վատիկանում, 1971 թվականին):

Սեպտեմբերի 19

1869 թվականին ծնվել է գրող, երգիծաբան, հրապարակագիր Երվանդ Օտյանը (մահացել է 1926 թվականին):

Սեպտեմբերի 26

1869 թվականին ծնվել է երգահան, աշխարհահռչակ երգիչ, երաժշտագետ, վարդապետ, Հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս վարդապետը (Սողոմոն Սողոմոնյան, մահացել է 1935 թվականին):

1890 թվականին Թբիլիսիում ծնվել է բանասիրական ու պատմական գիտությունների դոկտոր, Թբիլիսիի պետական համալսարանի պրոֆեսոր Լեւոն Մելիքսեթ Բեկը (մահացել է 1963 թվականին, Թբիլիսիում, հուղարկավորված է մայրաքաղաքի Դիդուբեի պանթեոնում):

Սեպտեմբերի 28

1857 թվականին Վրաստանի Սիդնալի քաղաքում ծնվել է անվանի նկարիչ, գրող, հասարակական գործիչ Գեորգ Բաշինջալյանը (մահացել է 1925 թվականին, հուղարկավորված է Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցու գավթում):

Սեպտեմբերի 30

1985 թվականին մահացել է ճանաչված աստղագետ, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Միջազգային աստղագիտական միության «Գալակտիկաներ» հանձնաժողովի նախագահ Բենիամին Մարգարյանը (ծնված՝ 1913 թվականին, Մառնեուլիի Շահունյան ավանում (նախկին՝ Շուլավերի):

1969 թվականին Նինոծմինդայում ծնվել է Վրաստանի խորհրդարանի 10-րդ եւ 11-րդ գումարումների պատգամավոր Սմբատ Կյուրեղյանը:

1940 թվականին ծնվել է Ռուբեն Ռուխկյանը, Վրաստանի վաստակավոր լրագրող, հայտնի լուսանկարիչ:

Պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Advertisement for TBC Capital featuring a logo, text 'ՊԱՐՊԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒ ԱՄԱՌԱՆՈՑԸ 135 ԼԱՐԻՈՎ', 'ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԻՐ 300 ԼԱՐԻ ԹԵՃ ԳԻԾ: 125', and 'ՊԱՐՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ' with a phone icon and '125'.

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՑԻՍՏԻՏ. ԲՈՒԺՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ



Արդեն մի քանի տարի է, ինչ միգրացիայի հետ կապված լուրջ խնդիրներ ունեն։ Սկզբում փորձեցի անտեսել հանկարծակի սկսված հիվանդությունը, կարծում էի՝ ինքն իրեն կանցնի, սակայն ժամանակի ընթացքում վիճակս ավելի բարդացավ։ Դիմեցի բժիշկներին, ասացին՝ ցիստիտ է։ Դեղեր դուրս գրեցին, սակայն, գրեթե ոչ մի փոփոխություն չեղավ։ Ցիստիտի դեմ գուցե կա՞ն ժողովրդական միջոցներ... Ա.Ս.

Բաթումի

Ցիստիտը միգրացիայի բորբոքային հիվանդություն է, որն ամենից առաջ կապված է վարակի հետ։ Տարբերակում են ցիստիտի սուր և քրոնիկական ձևերը։

Եւ ձիաձետի տերեւներից, եւ այն օգտագործել ցավոտ միգրացիայի դեպքում։ Խմել տաք վիճակում, օրական 3 բաժակ, ոչ մեծ, բայց հաճախակի կու՛մերով։

Սուր ցիստիտին բնորոշ են հետեւյալ ախտանշանները. հիվանդությունը սկսվում է հանկարծակի։ Ցավեր են սկսվում որովայնի ստորին հատվածում, եւ անհանգստացնում ցավոտ, այրոցով ուղեկցվող հաճախամիգրացիայի։ Եթե հիվանդությունը ծանր բույթ է կրում, ապա մեզն ունենում է տհաճ հոտ։ Երբեմն հնարավոր է նաեւ արյան գնդերի առկայություն։ Եթե իհիվանդը ջերմում է, ապա հնարավոր է, որ բորբոքում արդեն տարածվում է դեպի երիկամներ (պիելոնեֆրիտ)։ Եթե դժվար միգրացիայի ժամանակ փսխում, մեջքի ցավ, դող է լինում, հավանական է, որ դա պայմանավորված է երիկամային վարակով։

* Խեցեգործական կավի վրա ավելացնել խնձորի քացախ, լավ խառնել։ Ստացված խառնուրդը բարակ շերտով քսել կտորի վրա եւ դնել գոտկատեղին երիկամների շրջանում։

* 2 ճաշի գդալ կաղամախու կեղեւը 15 րոպե եփել 200 մլ եռջրում։ Մեղմ կրակի վրա թրմել կես ժամ, քամել։ Խմել 2-ական ճաշի գդալ, օրը 3-4 անգամ, ուտելուց առաջ։ Բուժման կուրսը երկու շաբաթ է։

* Յնարավորին չափ հաճախակի ուտել մեղրի եւ մայրիկի ընկույզի խառնուրդ։ Այդ խառնուրդը հրաշալի կերպով մաքրում է երիկամները, միգրացիայի եւ նպաստում է մեզը պահելու։

* Մեղրը եւ նեխուրի սերմերը խառնել՝ 1:1 հարաբերությամբ։ Այդ խառնուրդից ուտել 1-ական թեյի գդալ, օրը 3 անգամ։

ՀԵՏԱԲԵՐԻ Է

ՊԱՐՁՎՈՒՄ Է, ՈՐ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԱՊՐԵԼՆ ԱՎԵԼԻ ԷԺԱՆ Է, ՔԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Որքան էլ տարօրինակ լինի, կան կազմակերպություններ, որոնք ուսումնասիրում են այս կամ այն երկրում, մայրաքաղաքում կենսաապահովման արժեքները։ Դրանցից է Numbao հետազոտական կազմակերպությունը, որի վերջին հրապարակումը անմիջանկատա՞րեն վերաբերում էր Վրաստանի եւ Հայաստանի մայրաքաղաքներին։



Կենսաապահովման արժեքի ինդեքսը ցույց է տալիս, որ Երեւանում կենսաապահովման արժեքը, բացառությամբ՝ վարձակալության (բնակարանի վարձակալություն), 18,8 տոկոսով ավելի թանկ է։

Րոնական թաղամասում երեք սենյականոց բնակարանի վարձավճարը կազմում է 3 697 լարի, մինչդեռ Հայաստանի մայրաքաղաքում՝ 484 հազար 90 հայկական դրամ (3 403 լարի) է։

Numbao-ի տվյալներով, Թբիլիսիում մեկ անվա համար անհրաժեշտ է մոտ 8 400 լարի (նեռառայլ՝ բնակարանի վարձակալությունը), իսկ Հայաստանում՝ 1 մլն 361 հազար 325 հայկական դրամ (9 571 լարի)։

Նույն ուսումնասիրության համաձայն, Վրաստանում անսակա միջին աշխատավարձը, առանց հարկերի, 11.9 տոկոսով ավելի բարձր է Հայաստանից։

Ինչ վերաբերում է վարձակալության գներին, ապա, տվյալների համաձայն, Երեւանի կենտրոնում մեկ սենյականոց բնակարանի ամսական վարձակալության գինը կազմում է 286 հազար 190 դրամ (2012 լարի), մինչդեռ Թբիլիսիում՝ 1 922 լարի է։ Վրաստանի մայրաքաղաքի կենտրոնական թաղամասում երեք սենյականոց բնակարանի վարձավճարը կազմում է 3 697 լարի, մինչդեռ Հայաստանի մայրաքաղաքում՝ 484 հազար 90 հայկական դրամ (3 403 լարի) է։

Հայաստանում միջին աշխատավարձը կազմում է 1 517 լարի (215 հազար 777 հայկական դրամ), մինչդեռ Վրաստանում՝ 1 721 լարի է։

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ԵՐԵՒԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՌԱՋԻՆ ԳԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽԵԼՈՒՄ

Շատ ուրախ իրադարձություն ու իրարանցում է, ինչպես ասում են, «առաջին անգամ՝ առաջին դասարան» գնալը, ինչպես ծնողների, տատիկ-պապիկների, այնպես էլ՝ վեց տարին բոլորած կամ չբոլորած փոքրիկների համար։ Սակայն, երկու շաբաթ հետո տոնական, հուզական մթնոլորտն իր տեղը գիջում է առօրյա հոգսերին ու ծանր աշխատանքին։ Ինչպե՞ս ենք մենք երեխային պատրաստում դպրոց գնալուն, ի՞նչ պետք է երեխան կարողանա ինքնուրույն անել, ի՞նչ հմտություններ եւ գիտելիքներ են կարելու դպրոց գնալու համար։ Այս եւ նման խնդիրներն են, որ ծառանում են ծնողի, երեխայի, ինչո՞ւ չէ՞ նաեւ ուսուցիչների ու մանկավարժների առաջ։



Անկախ ներկայումս մոդայիկ դարձած քննադատական դիտողությունների, խորհրդային կրթությունը շատ-շատ դրական կողմեր եւ առավելություններ ունի։ Առաջին հերթին, այն համակարգված էր, եւ նախակրթարանից դպրոց անցումը կատարվում էր կազմակերպված, այն տրամաբանական շարունակական փուլ էր, եւ երեխայի ու ծնողի համար խնդրահարույց չէր, հատկապես՝ մանկապարտեզ հաճախած երեխայի համար։ Գիտելիքների, հմտությունների եւ կարողությունների առումով, բնական աճման փուլ ապահովող շղթայի օղակ էր։

Այս եւ նման խնդիրներն են, որ ծառանում են ծնողի, երեխայի, ինչո՞ւ չէ՞ նաեւ ուսուցիչների ու մանկավարժների առաջ։

Կա բավական մտահոգիչ միտում, որ վերջին տարիներին լայն տարածում է գտել ծնողների շրջանում։ Մի տեսակ մոդայիկ է, եւ անգամ մրցավազք է ինչեցնում 4-5 տարեկան երեխաների տարբեր քոլեջներ եւ զարգացման կենտրոններ հաճախելը։ Երեխան տվյալ կենտրոնի, քոլեջի տնօրենի պատասխանատվության ներքո է։ Տվյալ հաստատությունն իր ծրագրում կենտրոնական կան միասնական ծրագրի տարր անգամ չի ներառում, ավելի հաճախ նման հաստատությունները նույնիսկ գործունեության լիցենզիա (թույլտվություն) չունեն, չեն վերահսկվում եւ իրենց ծրագրերում շատ անկախ են։

Ինքնուրույն, եւ իր ոչ գրաճանաչ ընկերներից աստիճանաբար սկսում է հետ ընկնել։

Իսկ ի՞նչ սովորեցնել։ Ի՞նչ է պահանջվում վեց տարեկան երեխայից, այսինքն՝ ինչ սովորել նախադպրոցական տարիքում։ Դրանցից ամենակարելիներն են.

1. պետք է ակտիվ զարգացնել երեխայի մանր մոտորիկան,
2. պետք է զարգացնել երեխայի ուշադրության կենտրոնացումը եւ հասցնել այն մաքսիմալի՝ 15-20 րոպե (ըստ հնարավորության),
3. զարգացնել երեխայի հիշողությունը,
4. զարգացնել կրեատիվությունն ու երեւակայությունը,
5. զարգացնել տրամաբանությունը,
6. զարգացնել իր միտքն ազատ, անկաշկանդ արտահայտելու ունակությունը,
7. սովորեցնել ինքնասպասարկման ամենատարրական էլեմենտները (հանվել, հագնվել, շոքերը կոկիկ դնել, սեղանից օգտվել),
8. սովորեցնել անձնական հիգիենայի կանոններին հետեւել (լվացվել, ատամները լվանալ, ինքնուրույն օգտվել զուգարանից եւ այլն),
9. սովորեցնել իրեն՝ գրքեր, տետրեր, գրիչներ կրկիկ օգտագործել, պահել եւ այլն։

Ինքնուրույն, եւ իր ոչ գրաճանաչ ընկերներից աստիճանաբար սկսում է հետ ընկնել։

Իսկ ի՞նչ սովորեցնել։ Ի՞նչ է պահանջվում վեց տարեկան երեխայից, այսինքն՝ ինչ սովորել նախադպրոցական տարիքում։ Դրանցից ամենակարելիներն են.

1. պետք է ակտիվ զարգացնել երեխայի մանր մոտորիկան,
2. պետք է զարգացնել երեխայի ուշադրության կենտրոնացումը եւ հասցնել այն մաքսիմալի՝ 15-20 րոպե (ըստ հնարավորության),
3. զարգացնել երեխայի հիշողությունը,
4. զարգացնել կրեատիվությունն ու երեւակայությունը,
5. զարգացնել տրամաբանությունը,
6. զարգացնել իր միտքն ազատ, անկաշկանդ արտահայտելու ունակությունը,
7. սովորեցնել ինքնասպասարկման ամենատարրական էլեմենտները (հանվել, հագնվել, շոքերը կոկիկ դնել, սեղանից օգտվել),
8. սովորեցնել անձնական հիգիենայի կանոններին հետեւել (լվացվել, ատամները լվանալ, ինքնուրույն օգտվել զուգարանից եւ այլն),
9. սովորեցնել իրեն՝ գրքեր, տետրեր, գրիչներ կրկիկ օգտագործել, պահել եւ այլն։

Հար է նման այլ հմտություններ ու կարողություններ են պետք, որ դպրոց եկած երեխաների գրեթե մեծ մասը չգիտի, եւ ուսուցիչը ստիպված իր վրա է վերցնում մանկապարտեզի դաստիարակի գործառնությունը։ Այստեղ թերի է մնում դասավարի աշխատանքը, որն ի վնաս մեր երեխայի է։

Ուրեմն, սիրելի՛ ծնողներ, կոչ ենք անում գիտակցաբար մոտենալ այս շատ լուրջ խնդրին եւ հասկանալ, որ 5 տարեկան երեխան այս վերը թվարկածը գերազանց յուրացնելու կարիք ունի, իր մանկությունը եւ խաղը՝ լիարժեք վայելելու իրավունք։ Մի՛ վախեցեք, տառաճանաչ դառնալու համար դեռ ժամանակ ունի, դրա համար կա դպրոց։ Իսկ նախադպրոցական բոլոր հաստատություններին կոչ ենք անում ուշադրություն դարձնել, գուցե առաջին հայացքից չնչին թվացող, բայց իրականում այս լուրջ եւ կարելու խնդրին, իսկ դուք, հարգելի՛ ծնողներ, ձեր երեխայի համար պահանջեք այսպիսի նախադպրոցական կրթություն։

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Սեփական ընտանիքի բնականոն ընթացքն ապահովելը հաճախ ավելի դժուր է, քան նահանգ կառավարելը։

ՏԱԿԻՏՈՒ

Լավագույնը, որ հայրը կարող է անել իր զավակների համար, դա նրանց մորը սիրելն է։

Թ.ՅԵՍԵՐԳ

Կյանքում խնդիրներ չկան ճիշտ այնպես, ինչպես շախմատում չկան լավագույն քայլեր։ Անհրաժեշտ է ոչ թե ամենալավն անել, այլ պարզապես անել լավագույնը, որը հնարավոր է տվյալ իրավիճակում։

Վ.ՅՐԱՆԿԻՆ

Մարդու մասին չի կարելի դատել առաջին հայացքից։

Ձիւն հայացքից. արժանիքները սովորաբար պատված են լինում համեստության քողով, իսկ թերությունները քողարկված են լինում կեղծավորության դիմակով։



Ժ.ԼԱՐՅՈՒԵՐ

Մենք հավանում ենք մարդուն, եթե նրա մեջ հաճելի բան ենք գտնում, բայց սիրում ենք նրան՝ անկախ ամեն ինչից։

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ «Վրաստանի» ընթերցող Նիկոնոսի մունիցիպալիտետ

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ. ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՐ ՀԱՍՏԱՏՎԵՑ ԸՆԴՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 31-սեպտեմբերի 2-ը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, գտնվում էր Չինաստանում:

Այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետը մասնակցեց թիմին քաղաքում շուրջ երեք տասնյակ երկրների ղեկավարների մասնակցությամբ անցկացված Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) զագաթնաժողովին, իսկ սեպտեմբերի 2-ին՝ Պեկինում անցկացված երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթական ավարտի 80-ամյակին նվիրված զորահանդեսին:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Չինաստանի նախագահ Սի Ծին Փինգի հետ: Հանդիպմանը կողմերը հայտարարեցին, որ Հայաստանի և Չինաստանի միջև հաստատվում է ռազմավարական գործընկերություն, ինչի մասին ընդունվում է համատեղ հայտարարություն:

Նիկոլ Փաշինյանը վերահաստատեց Հայաստանի ցանկությունը՝ անդամակցել Շանհայի համագործակցության



կազմակերպությանը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը ՇՀԿ-ում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇԻՆՅԱՆԻ ԱՅՑԸ ԾԱՊՈՆԻԱ



Սեպտեմբերի 3-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը աշխատանքային այցով գտնվում էր Ճապոնիայում:

ունեցավ ճապոնիայի վարչապետ Շիգեհիսի Իշիբայի հետ, Օսակայում մասնակցեց «Էքսպո 2025»-ի շրջանակում անցկացվող Հայաստանի ազգային օրվան նվիրված միջոցառմանը:

Սոկիոյում՝ Կանտեյոնում, Հայաստանի և ճապոնիայի վարչապետների հանդիպմանը քննարկվեցին Հայաստան-ճապոնիա համագործակցության հիմնական

ուղղությունները՝ տնտեսական կապերի և ներդրումային համագործակցության ընդլայնումը, կրթության, գիտության և մշակույթի, զբոսաշրջության ոլորտներում կապերի խորացումը:

Մտքեր փոխանակվեցին տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման հետազոտության շուրջ:

Ի պատիվ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ ճապոնիայի վարչապետ Շիգեհիսի Իշիբայի անունից տրվեց պաշտոնական ճաշ:

Այցի շրջանակում, Հայաստանի վարչապետը Տոկիոյում հանդիպում

նարկվեցին Հայաստան-ճապոնիա համագործակցության հիմնական

Ն.ՓԱՇԻՆՅԱՆ - Վ.ՊՈՒՏԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ԿԱՐԵՎՈՐԵՑԻՆ ՏԱՐԱԾԱՆԵՐԻ ԱՅԻՆ ԵՎ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ

Սեպտեմբերի 1-ին Շանհայի համագործակցության կազմակերպության զագաթնաժողովի շրջանակում, կայացել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը:

Ձրուցակիցները կարեւորեցին հանդիպումը՝ ընդգծելով, որ այն արդյունավետ հնարավորություն է երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերն ու դրանց հետագա զարգացման ուղիները քննարկելու համար:

Կողմերը բարձր գնահատեցին Հայաստանի և Ռուսաստանի միջև շարունակական ու ակտիվ երկխոսությունը՝ կարեւորելով ինչպես բարձր մակարդակի անձնակազմի շփումները, այնպես էլ՝ միջպետական ինստիտուցիոնալ համագործակցությունը:

Անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային և միջազգային մշակութային հարցերի:

Շանհայի համագործակցության կազմակերպության զագաթնաժողովի շրջանակում, Հայաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, Վիետնամի վարչապետ Ֆամ Մին Հինգի, ինչպես նաև իրավաբանական կարգավիճակով զագաթնաժողովին ներկա գտնվող Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱԿԻՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

Սեպտեմբերի 2-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը և Պակիստանի փոխվարչապետ ու արտաքին գործերի նախարար Մուհամմադ Իշազը Ղարը ստորագրեցին Հայաստանի և Պակիստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համատեղ կոմյունիկե:

Ստորագրման արարողությունը կայացավ Չինաստանի թիբեթյան քաղաքում անցկացվող Շանհայի համագործակցության կազմակերպության զագաթնաժողովի շրջանակներում: Հայաստանի և Պակիստանի նախարարները համաձայնեցին փոխանակվել ներկայացուցիչներով

և միմյանց ցուցաբերել անհրաժեշտ աջակցությունը՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961թ. Վիեննայի կոնվենցիային ու միջազգային սովորույթային պրակտիկային համապատասխան փոխադարձության հիման վրա դիվանագիտական հարաբերությունների կյանքի կոչման նպատակով:

ՎԵՑ ԱՄՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՍԱՑԵԼ Է 17 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն այս տարվա առաջին կիսամյակում ստացել է 17 մլն 98,4 հազար դոլարի մարդասիրական օգնություն, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 75 տոկոսով:

Հայաստանի Վիճակագրական կոմիտեի իրապարակած տվյալների համաձայն, հունվար-հունիսին մարդասիրական օգնության տեսքով Հայաստան է ուղարկվել 9 մլն 534,4 հազար դոլարի քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք, ապա՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, որոնց արժեքը կազմում է 1 մլն 867,6 հազար դոլար: Երրորդ աստիճանաբար վերցրելու օդային և ջրային տրանսպորտի միջոցներն են՝ 1 մլն 467,3 հազար դոլար ծավալով: Հատկանշական է, որ Հայաստան ամենաշատ մարդասիրական օգնություն ստացել է Միացյալ Նահանգներից: ԱՄՆ-ից ստացված մարդասիրական օգնությունը 4 մլն 564,4 հազար

դոլարի է, որը կազմում է ընդհանուրի 26,7 տոկոսը: Ընդ որում, 2024-ի առաջին կիսամյակի համեմատ, ուղարկված ծավալն աճել է 11,1 տոկոսով: Հայաստան ուղարկած մարդասիրական օգնության ծավալներով երկրորդ տեղում Չինաստանն է՝ 2 մլն 528,5 հազար դոլարի, որը կազմում է ընդհանուրի 14,8 տոկոսը. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, աճն ավելի է 2,6 անգամ: Օգնություն ուղարկած ծավալի հաշվարկով երրորդ երկիրը Իտալիան է՝ 1 մլն 815,5 հազար դոլար, որը կազմել է ընդհանուրի 10,6 տոկոսը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, այն ավելացել է 25,5 տոկոսով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ԳԴՐՈՅՆԵՐՈՒՄ ՄԵՎՆԱՐԿԵՑ ԵՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 1-ին Հայաստանի հանրակրթական դպրոցները հանդիսավոր պայմաններում կրկին բացեցին իրենց դռներն աշակերտների առջև՝ ազդարարելով նոր ուսումնական տարվա մեկնարկը: 2025-2026 թվականների ուսումնական տարում հայաստանյան դպրոցներում գրանցվել է շուրջ հինգ հազար առաջին դասարանցի: Ընդհանուր առմամբ, Հայաստանի հանրակրթական հաստատություններում սովորողների թիվը տարեցտարի աճում է, և այն արդեն մոտենում է կես միլիոնի ցուցանիշին:

ՎԵՑ ԱՄՍՈՒՄ ՄԵՎԵԼ Է 14 609 ԵՐԵՆԱ

Ըստ Հայաստանի Վիճակագրական կոմիտեի իրապարակած տվյալների, Հայաստանում այս տարվա առաջին կիսամյակում ծնվել է 14 հազար 609 երեխա՝ 1007-ով պակաս, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում. մահացել է 13 հազար 12 մարդ, ինչը 58-ով ավելի քիչ է, քան 2024-ի նույն ժամանակում գրանցված մահերը: Բնակչության բնական հավելաճը կազմել է 1 597 մարդ: Այս տարվա առաջին կիսամյակում նվազել է մեռելածինների թիվը: Մահացած ծնվածների թիվը կազմել է 197, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 229-ի դիմաց: Հայաստանում հունվար-հունիս ամիսներին գրանցվել է 6 388 ամուսնություն, ինչը 15,3 տոկոսով ավելի քիչ է, քան 2024-ի նույն ժամանակահատվածում: Սակայն ամուսնալուծությունների թիվն ավելացել է, գրանցվել է 2 352 ամուսնալուծություն՝ նախորդ տարվա հունվար-հունիսի 2 220-ի դիմաց:

ԲՈՒՀԵՐՈՒՄ ՆՎԱՉԵԼ Է ԹՍՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ

Բարչրագույն ուսումնական հաստատություններում 2025-2026 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներով, թափուր տեղերի թիվը հինգ անգամ նվազել է նախորդ տարվա ցուցանիշից: Եթե 2024 թվականին թափուր էր մնացել 6 174 տեղ, ապա, այս տարվա ընդունելության արդյունքներով, թափուր տեղերի թիվը 1174 է: Ընդ որում, անվճար կամ պետության փոխհատուցմամբ թափուր տեղերի թիվն ընդամենը 219-ն է:

ԱՃՈՒՄ Է ԺՄՍՆԱԿԱՎՈՐ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՐԳՆԵՐԻ ԹԻՎԸ

Հայաստանում 2025 թվականի հունվար-հունիսին ժամանակավոր կայության կարգավիճակ է ստացել 1 815 օտարերկրացի, մշտական կայության կարգավիճակ՝ 1 775 օտարերկրացի: Հայաստանում առաջին կիսամյակում ամենաշատը ժամանակավոր կայության կարգավիճակ են ստացել ՌԴ քաղաքացիներ՝ 474 մարդ: 6 ամսում ժամանակավոր կայության կարգավիճակ է ստացել Հնդկաստանի 466, Իրանի՝ 293 քաղաքացի:

ՄԻԱՅՆ ՀՈՒԼԻՍԻՆ՝ ԱՎԵԼ ԶԱՆ ԶԱՌՈՐԳ ՄԻԼԻՈՆ ԶԲՈՍԱՆԵՐԳԻԿ

Այս տարվա հուլիսին Հայաստան այցելել է 263 հազար 592 զբոսաշրջիկ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 237 հազար 603-ի համեմատ: 2019 թվականից ի վեր, այս տարվա հուլիսին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվն ամենամեծն է: 2025թ. հունվար-հունիս ամսներին դեպի Հայաստան առավել շատ զբոսաշրջային այցելություններ են գրանցվել Ռուսաստանից (39 տոկոս), Վրաստանից (14 տոկոս) և Իրանից (8 տոկոս):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

8.09.2025 Սուրբ Կույս Սարիամի ծնունդն Ամնայից



14.09.2025 Խաչվերաց

Խաչվերացը Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարեւորն է, որովհետեւ նվիրված է գերությունից խաչի վերադարձի եւ փառաբանության հիշատակին: Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց: Հայաստանյայց եկեղեցուն

Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը:

Խաչվերացի հաջորդ օրը մեռելոց է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ, կատարվում է հոգեհանգստյան կարգ, որից հետո այցելում են հանգուցյալների շիրիմներին:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՃԱՆԱԳՎԱԾ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԳԻՈՐԳԻ ՄԱՆՈՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՅԱՎ ՀՈՒՇԱՄԵՂԱԼԻ

2025 թվականի սեպտեմբերի 2-ին, Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, Թեմակալ առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանը բրիլիանտ (այսօր ապրում է ԱՄՆ-ում), ճանաչված գեղանկարիչ Գիորգի Մանոյանին փոխանցեց Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյան 150» պատվավոր հուշանդալը:



Գերաշնորհ Տեր Կիրակոս եպիսկոպոսը օրհնության եւ շնորհավորանքի իր խոսքում արժեւորեց գեղանկարիչ Գիորգի Մանոյանի նվիրվածությունը Թբիլիսիի հայկական հետքը մոռացության քողից վեր հանող եւ գրաֆիկական ու յուղաներկ կտավներով սերունդներին փոխանցող գործունեությունը, նրա անմոռաց սերն իր ծննդավայրի նկատմամբ եւ նախնային առողջություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՍՊՈՐՏ

ԵՎՐՈՔԱՎԵՏ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ 1/8 ԵԶՐԱՓՈՎԱԳՈՒՄ



Վրաստանի բասկետբոլի հավաքականը, Եվրոպայի բասկետբոլի խմբային առաջնության շրջանակում, հինգ հանդիպումից հաղթելով երկուսում, նվաճեց առաջնության մեկ ութերորդ եզրափակչին մասնակցության ուղեգիր:

Վրաստանի հավաքականը խմբային մրցաշարում առավելության հասավ Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի (83:69), ապա՝ Կիպրոսի (93:61) հավաքականներին, իսկ հետո, ցավոք, զիջեց Իտալիայի (62:78), Հունաստանի (53:94) եւ Բուսնիա-Հերցեգովինայի (76:84) հավաքականներին, սակայն Իսպանիայի դեմ վրաց բասկետբոլիստների հավաքականը վճռորոշ դեր կատարեց խմբի չորրորդ ուղեգրի պայքարում:

Վրաստանի հավաքականը՝ Հունաստանի, Իտալիայի եւ Բուսնիա-Հերցեգովինայի հավաքականներին հետ հանդես կգա առաջնության մեկ ութերորդ եզրափակիչ փուլում:

Այդ փուլում Վրաստանի հավաքականի մրցակիցը Ֆրանսիայի հավաքականն է: Խաղը կկայանա սեպտեմբերի 7-ին:

ՖՈՒՏԲՈՒ ԱՆՀԱՅՈՂ ՍԵԿՆԱՐԿ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

2026 թվականի աշխարհի առաջնության ընտրական փուլում Եվրոպական «E» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը սեպտեմբերի 4-ին Թբիլիսիում իր ուժերը չափեց Թուրքիայի հավաքականի հետ եւ զիջեց 2:3 հաշվով:

Հատկանշական է, որ խաղի ընթացքում վրաց ֆուտբոլիստները պարտվում էին 0:3 հաշվով, թեւ երկրորդ խաղակեսում կարողացան բեկում մտցնել, խփեցին երկու գոլ, ուղղակի ժամանակը չբավականացրեց ավարտել խաղն ավելի ցանկալի արդյունքով:

Հիշեցնենք, որ Վրաստանի եւ Թուրքիայի ազգային հավաքականները վերջին անգամ միմյանց հանդիպել էին 2004 թվականին, Եվրոպայի առաջնությունում: Հանդիպումը 3:1 հաշվով ավարտվեց հոգուտ Թուրքիայի: Ընդհանուր առմամբ, Վրաստան-Թուրքիա հավաքականները մրցել են յոթ անգամ հինգ անգամ հաղթել են թուրքերը, մեկ հանդիպում ավարտվել է ոչ-ոքի, իսկ 2007 թվականին Թբիլիսիում վրաց ֆուտբոլիստներն առավելության հասան 1:0 հաշվով:

Վաղը՝ սեպտեմբերի 7-ին, Վրաստանի հավաքականը կհյուրընկալի Բուլղարիայի հավաքականին: Եվրոպական «E» խմբում վերոնշյալ թիմերից բացի, հանդես է գալիս նաեւ Իսպանիայի հավաքականը: Եվրոպական «F» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը սեպտեմբերի 6-ին եւ 9-ին, սեփական հարկի տակ, իր ուժերը կչափի Պորտուգալիայի եւ Իռլանդիայի հավաքականների հետ: «F» խմբում չորրորդ հավաքականը Հունգարիայի թիմն է:

Նշենք, որ Եվրոպական 12 խմբում առաջին տեղն զբաղեցրած թիմերն անմիջապես ստանում են առաջնության եզրափակիչ փուլին մասնակցության ուղեգիր, երկրորդ տեղն զբաղեցրած խմբերում 12 թիմերին ավելանում են Ազգերի լիգայի մրցաշարի չորս լավագույն հավաքականներ եւ միմյանց միջեւ խաղարկում առաջնության եզրափակիչ փուլի մնացած չորս ուղեգրերը:

ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Table with 7 columns and 10 rows containing numbers 1 through 60, representing a calendar or grid.

Large advertisement for 'VRASTAN' (ՎՐԱՍՏԱՆ) featuring a logo and detailed text about their services, contact information, and address in Tbilisi.

Footer section containing contact information for 'VRASTAN' (ՎՐԱՍՏԱՆ) and 'ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ' (VAN BAYBURETYAN), including phone numbers, email, and website.